Դարույր Սևակ

Անտառի վեպը

Ծերունի թեղին ու ջահել թխկին,
Թեքվելով իրար
Եվ արև տալով
Իրենց ստվերում դողացող ծաղկին՝
Զրույց են անում,
Մի զրույց անծա՛յր:
Կանաչ բացատից,
Ուր տաք է, պայծառ,
Ոտներս ինձ կրկին թավուտ են տանում:
Ականջս անտառի խոսք ու զրույցին՝
Ես քարանում եմ,
Օ, ո՛չ... կոճղանո՛ւմ:
Դարավոր կաղնին
Ասես մի ինչ-որ երգ է մռմռում կանաչ քթի տակ,
Մի նախնադարյան՝
Բոլորի՛ կողմից մոռացված մի երգ,
Մի ե՛րգ,
Որ գուցե չէր էլ հասցրել կոչվել երգ,
Մի ե՛րգ՝
Նախամարդկային ինչ-որ բառերով,
Որ տաշված էին,

Բայց ընդամենը քարե կացնի չափ,
Որ տաշված էին,
Եվ բնա՛վ մաշված...
Վիպասանում է անտառը կարծես,
Ասքեր է հիշում,
Որոնք աշխարհում
Երբեք չեն հագել բառե նեղ շապիկ
Ու քայլ չեն փոխել տառե ոտքերով:
Վիպասանում է անտառը կարծես,
Մի վեպ է պատմում,
Մի վեպ հնօրյա՛,
Մի վաղընջակա՛ն - անհա՛յտ առասպել,
Մի ավանդությո՛ւն՝
Արշավի մասին սառցադաշտերի,
Նրանց սպիտակ ահեղ վաշտերի
Նահանջի մասին,
Նահա՛նջ,
Որ անշուշտ նահանջ չէր կոչվում.
Կա ուրի՛շ մի բառ,
Որ ջրհեղեղի հին իմաստն ուներ...
Ու լուռ լսում են անտառի որդիք,
Լսում են պապին՝
Աչքերը չռած,
Դունչերը ծռած,
Եվ մամոնտների ահեղ ոտքի տակ
Չեն տեսնում նրա՛ն,
Որ մինչև անգամ դեռ չունի անուն,
Եվ հետո՛,
Հետո՛,
Շա՛տ ու շա՛տ հետո

Պիտի «մա՛րդ» կոչվի...
Խռոված քամին՝
Հետաքրքրքրված կաղնու վիպումով,
Խռովվածությունն արդեն մոռացած,
Բերնին մի տերև՝
Հիմա քարացած
Ականջ է դնում:
Իսկ իմ հոգու մեջ
Զարթնում է հանկարծ անհա՛յտ մի թախիծ,
Մի հազարամյա անանո՛ւն կարոտ,
Որ բազո՛ւմ դարեր քնած է եղել,
Ինչպես մետաղը՝
Որձաքարի մեջ,
Ինչպես կրակը՝
Ատոմի գրկում...
Ու թվում է ինձ.
Ծառերի խորունկ ճեղքերն էլ արդեն
Ճեղքեր չեն բնավ,
Այլ սեպագրրեր անհայտ մի լեզվի:
Ու թվում է ինձ.
Այնտեղ, ուր շուքից
Գետակի ջուրն է ասես սևանում,
Իրենց ոտերն են հիմա լվանում
Ո՛չ ժայռեր փոչոտ,
Այլ վայրենինե՛ր,
Այն էլ՝ մի ցեղից,
Որ չունի անգամ վերջին մոհիկան:
Ու թվում է ինձ.
Այս լիճը փոքրիկ
Ո՛չ թե պարզապես լճակ է, որ կա,

Այլ հենց մոհիկա՞ն՝
Վերջի՛ն մոհիկանն այն սառցադաշտի,
Որ դարեր առաջ եղել է այստեղ...
Ու թվում է ինձ,
Որ այսպես՝
Կանգնած կանաչ բացատում,
Ուր որ է ես էլ, ուժով մի կախարդ,
Արմա՛տ կձգեմ,
Կհագնեմ սաղա՛րթ...

29.IV.1959թ.
Մոսկվա